

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 դեկտեմբերի 2013 թվականի N156 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 47 արձանագրային որոշման 2-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշումը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Աշխատակազմի ղեկավար

Ա. Դավթյան

Քարտուղարության պետ

Հ. Ավայան

Իրավաբանական բաժնի վարիչ

Ա. Գևորգյան

20 դեկտեմբերի 2013թ.
ք. Իջևան

